



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԲԱՆ ՂԳ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Աստուած յաիպենական, բարերար եւ ամենակալ,
սպեղծող լոյսին եւ յօրինող գիշերին.
մահուան մէջ կեանք եւ խաւարին մէջ լոյս եւ Դուն.
ակնկալողներուն յոյսը եւ շուարածներուն երկայնամտութիւնը.
Քու ամենահնար իմաստութեամբդ առաւօտի կը փոխես մահուան ստուերները,
ո՛վ աննուաղ ծագումի եւ անմուտ արեգակ.
որովհետեւ գիշերին խաւարը չի կրնար ծածկել Քու փերութեանդ փառքը:
Դուն կը լսես կաստածներու հեծութիւնը եւ կը նայիս խոնարհներուն աղօթքին,
եւ կ'ընդունիս անոնց խնդրուածքը,
Աստուածս եւ Թագաւորս, կեանքս եւ ապաւէնս,
յոյսս եւ վարահութիւնս, Յիսուս Քրիստոս, ամենուն Աստուածը.
ո՛վ սուրբերուն հոգիին մէջ հանգչող Սուրբ,
վիշտերու միսիթարութիւն եւ մեղաւորներուն քաւարան,
որ գիտես ամէն բան՝ անոնց ըլլալէն ալ առաջ:
Թող Քու աջդ մեր վրայ մնայ, որովհետեւ Դուն գթած եւ ողորմած ես,
ու Քու անունովդ կոչուած են Քու բոլոր ծառաներդ:
Փառք եւ իշխանութիւն Քեզի, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ,
յաիպեանս յաիպենից: Ամէն:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ 5: 9-16



Եւ հիմա պահը կը հասնի եւ Հարսը կը սկսի փնտրելու Փեսան: Անոր կը պարասխանեն ըսելով. «**Քու Փեսադ ինչով փարբեր է միսներէն**»: Ահա Հարսը մէկ առ մէկ կը սկսի բացատրել եւ ներկայացնել Փեսան ու Անոր իւրայարկութիւնն ու գեղեցկութիւնը:

Անիկա «**սպիտակ ու կարմիր է**»: Կը խորհրդանշէ Քրիստոսի մարդեղութիւնը՝ մարմին եւ կարմիրը՝ արիւն: Սպիտակը՝ մաքրութիւնը, որ մարմինը մեղք չէ ճանչցած, իսկ կարմիրը՝ արիւնը: Ուստի Անոր ծնունդը կը ներկայացնէ, որ թէպէտ մարմին սրացաւ կոյս Մարիամէն, բայց Անոր ծնունդը միսներուն ծնունդին չի նմանիր, որովհետեւ Անոր ծնունդը րեղի ունեցաւ Սուրբ Հոգիին միջոցաւ:

Անոր «**աչքերը վազող ջուրերու քով կաթով լուացուած աղանիներու աչքերուն կը նմանին**»: Այսինքն՝ միամիտ է, որ կը նշանակէ չունի այլեւայլ խարդախ եւ թիւր նայուածք մարդոց նկարմամբ, այլ՝ ուղիղ, ճշմարիտ եւ սրահայեաց: Որ կը րեսնէ ամէն ինչ որ կայ մարդու մէջ, ու կը քննէ անոնց խորհուրդները:

Տակաւին, «**անոր քիմքը՝ քաղցր ու ինք ամբողջ ցանկալի է**»: Քիմքի քաղցրութիւնը, որ կը նշանակէ Անոր բերնէն ելած ամէն մէկ խօսք քաղցր է մեղրէն աւելի: Ամէն անգամ երբ հրաւիրէ եւ կոչ ուղղէ մարդկութեան. «*Ինձի եկէք դուք բոլորդ հոգնած ու բռնաւորուած եւ ես ձեզի հանգիստ պիտի տամ*», քաղցր կը հնչեն այդ կոչերը: Եւ իբրեւ այդպիսին ցանկալի է ունենալ, այնպէս ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. «*Անցեալի մարգարէները ցանկացին րեսնել, բայց չրեսան, լսել, բայց չլսեցին, ինչ որ դուք կը րեսնէք ու կը լսէք*» (Ղուկ 10.24): Մէկ այլ ուրիշ րեղ աշակերտներուն պիտի ըսէ. «*Պիտի զան ժամանակներ երբ պիտի ցանկաք րեսնել Մարդու Որդին, բայց պիտի չկարողանաք*» (Ղուկ 17.22): Ուստի, այսօր մենք, որքանով կը ցանկանք ունենալ Քրիստոսը, ըլլալ Քրիստոսի հետ:

ԵՐԳ ԵՐԳՈՅ 6:1-13

«**Իմ սիրականս իր պարտեզը՝ համեմներու ածուները իջաւ, որպէսզի պարտեզներու մէջ իր հօտը արածէ ու շուշաններ հաւաքէ**»: Ո՛ր փնտրել Փեսան՝ Քրիստոսը: Առիթով մը առաքեալները պիտի հարցնէին Յիսուսի. «ո՛ր է Աստուծոյ արքայութիւնը», «ցոյց րուր մեզի Հայրը»: Քրիստոս պիտի պարասխանէ ըսելով. «Ասդին անդին մի փնտրէք, ձեր ներսիդին փնտրեցէք»: Իդարեր կանայք երրորդ օրը պիտի երթային գերեզման օձելու մարմինը Յիսուսի, բայց պիտի չգտնէին: Հրեշտակը պիտի ըսէ. «Ի՛նչ եւ որո՞ւ կը փնտրէք, եւ ինչո՞ւ կենդանին մեռելներուն մէջ կը փնտրէք. հոս չէ յարութիւն առաւ»: Ահա նոյն ձեռով ո՛ր է Փեսան երբ կը հարցնեն, հարսը կը պարասխանէ «իմ սիրականս իր պարտեզը համեմներու ածուները իջաւ», այսինքն մեր ներսիդին, որովհետեւ հաւաքացեալները իրենք են այդ պարտեզը, որ Քրիստոսի համար հարս դարձան, ինչպէս պիտի ըսէ Դաւիթ Սաղմոս 128, նոյնպէս Եսայի մարգարէն 5:1:

Փեսան միեւնոյն ժամանակ նաեւ ճշմարիտ Հովին է. «Ես եմ ճշմարիտ Հովիւր», որ եկաւ իր հօտը արածելու, ոչ այն հովիւներուն նման, որոնք վարձկան էին, եւ կամ այն հովիւներուն նման, ինչպէս պիտի ըսէ Տէրը Եզեկիէլ մարգարէին բերնով, որ նախ իրենք կերան դալար արոտը եւ խմեցին գուլալ ջուրը, ապա աւելորդացը ձգեցին հօտին (Եզ 34 գլխ): Ահա ճշմարիտ Հովիւր՝ Քրիստոս ինք եկաւ փնտրելու եւ գտնելու կորսուածը, զայն արածելու, խնամելու եւ առիթ չրալու գողին, զայլին, որ յափշտակէ հօտը, այլ՝ առաքինութիւն եւ արդարութիւն պարգեւելով մեզմէ շուշաններ հաւաքէ, այսինքն՝ հաւաքի խօսքի ծաղիկներ եւ սրբութիւն:

«**Ես իմ սիրականիս եմ, իմ սիրականը իմն է**»: Քրիստոս պիտի ըսէ. «Իմ ոչխարներս իմ ձայնս կը լսեն եւ իմ երեւես կու գան, օրարին երեւես չեն երթար»: Մէկ այլ ուրիշ առիթով Տէրը ինք կ'ըսէ. «Ես անոնց Աստուած պիտի ըլլամ եւ անոնք ինձի ժողովուրդ»: Այսպէս Հարսը կը խոստովանի եւ կը յայտնէ իր սերը հանդէպ Փեսային, որ ուրիշին չէ, ու չի կրնար ըլլալ: Այս խոստովանութենէն յետոյ Փեսան կը սկսի Հարսին գեղեցկութիւնը անգամ մը եւս նկարագրել: Ուրկէ սակայն այս գեղեցկութիւնը: Երբ Հարսը, այսինքն հաւաքացեալները կը սկսին մօտենալու Աստուծոյ, ճանչնալով Անոր աստուածութիւնը, ահա այն արեն կը սկսին նաեւ Անոր գեղեցկութիւնը ժառանգել: Այն գեղեցկութիւնը որ Հարսը նկարագրեց Փեսային մասին, նոյն գեղեցկութիւնը ժառանգելով Փեսան Հարսին գովքը, գեղեցկութիւնը կը նկարագրէ: Այդ գեղեցկութիւնը Երուսաղէմի պէս հաճութիւն պարճառեց Փեսային, ինչպէս օրինակ հարիւրապետին ունեցած հաւաքին Քրիստոս պիտի սքանչանար. «այսպիսի հաւաքը նոյնիսկ Իսրայէլի մէջ չգտայ»:

«Աջքերդ ինձմէ դարձուր»: Այն աջքերը, որոնք կրցան փեսնել Քրիստոսի, Փեսային գեղեցկութիւնը եւ հասկնալ, որ նոյնիսկ հրեշտակներուն անգամ անհասկնալի էր, հեռացուր այդ աջքերը, որպէսզի աւելին փեսնելու եւ քննելու ցանկութեան պարագային չշլանան եւ չկուրնան մտքի աջքերը, ինչպէս Պօղոսի մարմնական աջքերը կուրցան երբ ունեցաւ փեսիլքը Դամասկոսի ճամբուն վրայ: Որովհետեւ ինչպէս որ արեւուն նայիլը աջքերուն վնաս կու փայ, նոյնպէս ալ Աստուծոյ գիտութեան մէջ չափազանց խորը նայիլը մտքի աջքերուն շլացում, որպէսզի յանկարծ հպարտութեան գիրկը չիյնանք:

Ահա այս բոլորը ցոյց կու փան Փեսային նմանուելու վիճակը, անգամ մը որ Փեսային կը մօտենանք կը սկսինք Փեսային նմանիլ, Անոր աշխարհ գալուստովը, խաչելութեամբը եւ մեր մտերմութեամբը, մեր աջքերը կը սկսին նմանուիլ Աստուծոյ աջքերուն՝ յստակութեամբ փեսնելու, վարսերը՝ Քրիստոսի վարսերուն, շրթները մեր կենդանութեան խօսքեր բիրտող շրթներու, որոնք կարմրած են Քրիստոսի արեամբ ու մաքրուած, որպէսզի օրհնութիւն բխի անկէ: Տակաւին, ինչպէս նուազ, որուն ներսիդին եղող պտուղը հիւանդներուն եւ փափաքողներուն համար առողջութիւն է, նոյնպէս ալ Աստուծոյ ընտրեալներուն սրտին ու մտքին մէջ ամբարուած առաքինութիւնն ու աստուածսիրութիւնը բժշկութիւն է: Այս ընտրեալները, որոնք եղան թագուհիներ, հարճեր եւ օրհորդներ: 60 թագուհիներ, 80 հարճեր եւ անթիւ օրհորդներ: Հեքաքրքրական է, որ թէեւ թագուհիներ, հարճեր եւ օրհորդներ կան, բայց ըստ աւագանի եւ ըստ խոստովանութեան մէկ են, իր մօր մէկ հասիկը, որպէս մայր Եկեղեցոյ աղանիներ, եւ Մուրր Հոգիի զաւակներ: